

ՀՈՒՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԳՈՒՐԳԵՆ ՍԵՎԱԿ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Ա. Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայկական ՍՍՀ ԳԱ իսկական անդամ, ՀՍՍՀ և ՎՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, դոկտոր Գ. Սևակը սովետահայ լեզվաբանության ականավոր դեմքերից էր, որի ծննդյան 80-ամյակը լրացավ վերջերս:

Գուրգեն Գրիգորի Սևակը (Գրիգորյան) ծնվել է 1904 թ. ապրիլի 15-ին (հին առմարով), Թբիլիսիում, բանվորի ընտանիքում: 1924 թ. ավարտելով Ներսիսյան դպրոցը, նույն թվականին ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետ: Այստեղ նա աշակերտում է հայագիտության պրոֆեսոր Զակարյանի, ինչպիսիք էին Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Լեոն, Հ. Մանանդյանը, Գ. Ղափանցյանը, Ա. Տերտեղյանը և ուրիշներ: 1928 թ. ավարտում է համալսարանը, իսկ 1932 թ.՝ ասպիրանտուրան: Սկսած 1930 թ. դասախոսել է հանրապետության տարբեր բուհերում (պետական համալսարան, մանկավարժական և հեռակա մանկավարժական ինստիտուտներ): Հրավիրվել է դասախոսելու նաև Թբիլիսիի, Բաքվի ու Ստեփանակերտի հեռակա մանկավարժական ինստիտուտներում: 1937 թ. նրան շնորհվում է դոցենտի կոչում: 1940 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1948-ին՝ դոկտորական դիսերտացիաներ: 1949 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1956 թ. ընտրվել է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1971-ին՝ ակադեմիկոս: Գ. Սևակը 30 տարի զլխավորել է Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնը, 35 տարի՝ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ժամանակակից հայերենի, կիրառական լեզվաբանության, տերմինաբանության ու խոսքի մշակույթի բաժինները տարբեր ժամանակներում: Սկսած 1967 թ. ղեկավարել է գիտությունների ակադեմիայի նախագահությանն առընթեր դիտատերմինաբանական խորհուրդը: Ըստ արժանվույն բարձր է գնահատվել անվանի գիտնականի գիտահետազոտական ու մանկավարժական արդյունավետ աշխատանքը: 1961 թ. նրան շնորհվել է Հայկական ՍՍՀ, իսկ 1967 թ.՝ Վրացական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ պատվավոր կոչումներ, պարգևատրվել է կառավարական մեդալներով, ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրերով, արժանացել Խ. Աբովյանի անվան մեդալի:

Գուրգեն Գրիգորի Սևակը վախճանվել է 1981 թ.:

Տարաբնույթ են պրոֆ. Սևակի գործունեության ասպարեզները, լայն՝ գիտական հետաքրքրությունների շրջանակները: Ընդհանուր լեզվաբանություն, ժամանակակից հայերեն, հայոց լեզվի պատմություն, հայոց գրեր, լեզվաշինարարություն ու լեզվի նորմավորում, դպրոցական ու բուհական դասագրքեր, վրացագիտություն, գեղարվեստական գրականության լեզու ու ոճ, ահա ինչ ուղղություններով է ծավալվել հմուտ լեզվաբանի գիտաքննական աշխատանքը:

Ընդհանուր լեզվաբանական-սեռական շատ երևույթներ նա քննարկել է հայերենի լեզվական նյութի հիման վրա, հայոց լեզվի իրողությունների գի-

տական քննությանը զուգահեռ, իսկ սա կարևոր նշանակություն ունի ինչպես Հայաստանում լեզվաբանական գիտության զարգացման, այնպես էլ հայերենի ուսումնասիրության համար:

Գ. Սևակի գիտականորեն միանգամայն հաջողված աշխատություններից է «Խոսքի մասերի ուսմունքը»¹: Սրա արժանիքներից մեկն այն է, որ ժամանակակից հայերենի խոսքի մասերի ուսումնասիրությունը ներկայացված է մի քանի լեզուների (վրացերեն, ռուսերեն) քերականությունների մեջ այն ժամանակ ընդունված խոսքի մասերի տեսության քննությանը զուգահեռ, նրա հետ ունեցած սեղստ կապի մեջ: Գ. Սևակը առաջարկում է խոսքի մասերի որոշման նոր հիմունք: Նա գտնում է, որ բառերի՝ խոսքի մասային կարգը որոշելիս չպետք է՝ ա) ելնել նրանց շարահյուսական իմաստից կամ ֆունկցիայից: բ) հաշվի առնել նրանց քերականական ձևական հատկանիշները: գ) ելնել նրանց իմաստային կոնկրետ, կոնտեքստային արժեքից: դ) ելնել նրանց կառուցվածքային տարբեր հասկանիշներից (բառակազմական, բառափոխական, շեշտունական, գերադասական, ստորադասական, իմաստաբանական, ծագումնաբանական, հնչյունական և այլն, և այլն): «Բառերի խոսքի մասային կատեգորիաները, — եզրակացնում է նա, — պետք է որոշել նրանց լեզվական-իմացաբանական ընդհանուր իմաստով»²: Խոսքի մասերի այս ումբոնումն ու դասակարգումը նշանակալից դեր խաղացին քերականական որոշ կարգեր գիտականորեն ճիշտ ըմբռնելու և բացատրելու գործում: Այս աշխատության մեջ առաջին անգամ հիմնավոր կերպով տարբերակվում են խոսքի մասերն ու նախադասության անդամները: Այս երկու տարբեր հասկացությունների չտարբերակման շնորհիվ է, որ հայ քերականության մեջ, օրինակ, ես, դու, նա դերանունները, գնալ, գալ, ասել բայերը համարվել են գոյական, իմ, քո, այս, այդ դերանունները, քնալ, քնալ, քնալ բայերը, առաջին, երկրորդ թվականները՝ ածական և այլն:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում դերանվան (որպես խոսքի մասի) էություն, մյուս խոսքի մասերի հետ ունեցած նրա հարաբերակցության և տարբերակիչ հասկանիշների բացահայտումը:

Սխալ կլինի, սակայն, կարծել, թե խոսքի մասերի այս տեսությունը կատարյալ է ու վերջնական: Այդ հաստատվում է թեկուզ նրանով, որ մինչև վերջերս էլ շարունակում են հրապարակ գալ առանձին աշխատություններ, որոնց մեջ հեղինակները փորձում են այլ ձևով ընկալել ու դասակարգել խոսքի մասերը³:

Հաստատապես կարելի է ասել, որ չկա ժամանակակից հայերենին առնչվող որևէ կարևոր հարց, որ դուրս մնացած լինի գիտնականի տեսադաշտից: Այստեղ կիսոսենք դրանցից մի քանիսի մասին:

Հայ նոր գրական լեզվի համակարգը և պատմությունը անկարելի է պատկերացնել առանց ժամանակակից հայերենի կազմավորման հարցի լուսաբանման: Սևակը այդ կարևոր հարցին անդրադարձել է մի քանի անգամ և տարբեր աշխատությունների մեջ⁴:

Հայ նոր գրական լեզուն հայ ժողովրդի համընդհանուր լեզվի՝ հայերենի նոր որակն է, նրա պատմական զարգացումով առաջացած արդի գրական (նաև խոսակցական) լեզուն: Այն հաջորդել է միջին հայերենին, իսկ սա էլ՝ գրաբարին: Սրանք ընդհանուր հայերենի երեք տարբեր փուլերն են, որոնց միջև, բնականաբար, սեղստ կապ կա: Եվ հասկանալի է, թե ինչու Սևակը ժամա-

¹ Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ. հ. XI, Երևան, 1939, էջ 189—244:

² Նույն տեղում, էջ 231:

³ Սրանցից առանձնանում է Գ. Բ. Զահուկյանի քննությունը, որը, մեր կարծիքով, ավելի հաջողված է իր ուղադրված փաստարկներով ու գիտական հիմնավորումներով: Տե՛ս նրա ժամանակակից հայերենի տեսության հիմունքները. Երևան, 1974, էջ 125—150:

⁴ Ժամանակակից հայոց լեզվի տեսություն. գիրք Ա (1939) և գիրք Բ (1947): Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն. 1948: Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց. 1955:

նակակից հայերենի կաղամալորման հարցը քննելիս սկզբում բնութագրում է այդ փուլերը, շոշափում հայագիտական կարևոր այլ հարցեր: Նա, բնականաբար, ավելի ընդարձակ ու հիմնավոր քննում է մեր գրական լեզվի զարգացման այս փուլին շոջանը՝ բնութագրելով արևելահայ ու արևմտահայ գրական լեզուները, գրական աշխարհաբարի զարգացման ենթաշրջանները, ժամանակակից հայոց լեզվի համակարգը և այլն:

Մեծ է Գ. Սևակի վաստակը ժամանակակից հայոց լեզվի գիտական քերականության ստեղծման գործում: Հայասնի է, որ արդի հայերենի գիտական ուսումնասիրության պատիվը պատկանում է պրոֆ. Մ. Արեղյանին⁵: Դրանից հետո Գ. Սևակն է, որ իր «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» և «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» (որ, բնույթով, նախորդի վերամշակված հրատարակությունն է) արժեքավոր աշխատությունների մեջ ներկայացրեց արդի գրական լեզվի հնչյունաբանության, բառագիտության, բառակազմության ու ձևաբանության քննությունը՝ լեզվական-քերականական բազմաթիվ իրողությունների նորովի նկատագրություններ և առաջադրանքներ հարցերի հիմնավոր վերլուծության:



Հնչյունաբանությանը նվիրված մասերում Սևակը ներկայացրել է ժամանակակից հայերենի հնչյունների գիտական իր տեսությունը՝ կապված հնչյունների ուսմունքի հետ: Օգտվելով հնչյունների արեգյանական սինսությունից, Սևակը այն ավելի մշակեց ու դարգացրեց՝ դարձնելով ավելի կոտ ու ճշգրիտ: Նա ճշտեց որոշ ըմբռնումներ (տառ և հնչյուն, երկբարբառ և երկհնչյուն, հնչյունների դասակարգում և այլն), կատարեց կարևոր լրացումներ (հնչման և գրության տարբերությունները, բարբառային, գրային և քմայնացված հնչումներ և այլն), գիտական հիմունքով խմբավորեց հնչյունական երեւույթները (բառաշեշտի հետ կապված կամ ժառանգորդական հնչյունափոխություն և ընդհանրական հնչյունափոխություն և այլն):

Գիտական որոշակի արդյունքի է հասել նա նաև մեր լեզվի բառապաշարի ուսումնասիրության բնագավառում: Առանձին-առանձին քննության առնելով հայերենի բառարանական կազմի, բառապաշարի շերտերի, գրաբարյան, բարբառային ու նորագույն փոխառությունների, նորաբանությունների ու հրնաբանությունների և սովետական շրջանում բառապաշարի տեղաշարժերի հարցերը, Սևակը առաջինը ավելի ընդարձակ և ընդհանուր առմամբ ճիշտ ներկայացնում է ժամանակակից հայերենի բառագանձի պատմական (սարածամանակյա) և նկարագրական (համաժամանակյա) քննությունը:

Հայոց լեզուն բառապաշարով հարուստ լեզուներից մեկն է աշխարհում: Սևակը հայերենի բառապաշարի հարստության հինգ հիմնական աղբյուր է նշում՝ հնդեվրոպական արմատներ ու բառեր, ստացվածքային բառեր, բարբառներ, բառակազմական մեծ ձևություններ և փոխառություններ:

5 Մ. Արեղյան. Հայոց լեզվի տեսություն. Երևան, 1931: Նույնի՝ Աշխարհաբարի շարադրություն. Վաղարշապատ, 1912:

Ընդունելով հայերենի բառապաշարի հինգ շերտեր (ընդհանուր հայերեն բառերի, դրաբարի, միջին հայերենի, բարբառային բառերի, նոր հայերեն բառերի), Սևակը տալիս է դրանց գիտական նկարագիրը և հատկապես կանոնադրում վերջինի վրա: Նոր հայերեն բառերի շերտի մեջ մտնում են արևելա-հայ ու արևմտահայ լեզուների մեջ գործածվող բնիկ և փոխառյալ այն բառերը, որոնք չկան գրաբարում, միջին հայերենում ու բարբառներում: Սրանք կամ փոխառություն են այլ լեզուներից և կամ նոր ժամանակներում կազմաված բաղադրյալ բառեր: Հայերենի բառապաշարը հարստացավ մի քանի միջոցներով ու ճանապարհներով (նոր բառերի ստեղծման, գրաբարից ու բարբառներից փոխառման, սեփական բառակազմությամբ նոր բառեր կազմելու, բառապատճենումների, այլ լեզուներից, հատկապես ռուսերենից բառափոխառության և այլն):

Բառագիտության հետ սերտորեն կապված է բառակազմությունը: Սևակը բավականաչափ հաջող վերլուծել է բառերի կառուցվածքն ու կազմությունը, ուսումնասիրել բաղադրյալ բառերի տեսակները, գիտականորեն խմբավորել ու դասդասել բառակազմական բաղադրիչները, սահմանել բառակազմական տեխնիկայի զարգացման փուլերը և այլն:

Խոսելով բառակազմության և բառաստեղծության մասին, նա էապես տարբերում է դրանք և բնութագրում իբրև բառակազմական տարբեր կարգեր՝ իրենց զարգացման ու կիրառության տարբեր ընթացքով:

Գ. Սևակը հայերենին հատուկ է համարում բառակազմության երեք տեսակ՝ բարդություն, ածանցում և հապավում: Առաջին երկուսը վաղուց հայտնի են, իսկ վերջինը՝ հապավումը, առաջին անգամ Սևակն է դիտել իբրև բառակազմության տեսակ մեր լեզվի մեջ: Նա լրացրեց, մշակեց, հարստացրեց հայերենի բառակազմության երկու տեսակների (բարդության ու ածանցման) վերաբերյալ եղած տեսությունը և մշակեց երրորդի (հապավման) տեսությունը: Սևակը հապավումը բնութագրել է որպես բառակազմության մի տեսակ, «երբ բարդ բառի բաղադրիչները (բոլորը կամ մի մասը) ոչ թե բառ կամ արմատ են, այլ բառից մեխանիկորեն վերցրած որևէ պայմանական մաս, որ որևէ այլ գործածություն չունի և չի ունեցել⁶: Հապավումներն ունեն իրենց ուրույն օրինաչափությունները և էապես տարբերվում են բառակազմության մյուս բոլոր ձևերից:

Խմբավորելով հապավումներն ըստ տեսակների ու ենթատեսակների և զուգահեռ կերպով քննության առնելով հապավումների տեխնիկան հայերենում ու ռուսերենում, նա հանգում է այն եզրակացության, որ «հապավման տեխնիկան հայերենում ստացել է իրոք ազգային ձև ու կերպարանք և մեխանիկական փոխադրություն չէ դոսից»⁷, որ բոլոր տեսակի հապավումները ենթարկվում են հայերենի բառաթեման (հոլովման) և բարդացման ու ածանցման կանոններին:

Գ. Սևակը ներկայացրել է նաև ժամանակակից հայերենի ձևաբանության գիտական ուսումնասիրությունը: Զեաբանական երևույթներն ու իրողությունները քննելիս նա հիմք է ընդունել նախորդ քերականների ուսմունքը, սակայն լրացրել է այն նոր հասկացություններով, հիմնավոր բացատրել ձևաբանական մի շարք երևույթներ, ուղղել ու ճշտել շատ ըմբռնումներ և այլն:

Գ. Սևակի գիտական ուսումնասիրությունների մի բնագավառն էլ հայոց լեզվի պատմությունն է, որի վերաբերյալ տարբեր ժամանակներում գրել է մեծ ու փոքր ուսումնասիրություններ⁸ կամ առանձին գլուխներ հասկացրել ալլ բնույթի աշխատություններում⁹:

⁶ Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 182:

⁷ Նույն տեղում, էջ 196:

⁸ Հայոց լեզվի զարգացման սովետական փուլը. Երևան, 1946: Լրեկահայ գրական լեզվի պատմության պերիոդիզացիան.— ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1947, № 3: Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն. Երևան, 1948 և այլն:

⁹ Ժամանակակից հայոց լեզվի տեսություն. Երևան, 1939: Ժամանակակից հայոց լեզվի յայտնիքներ. Երևան, 1955:

Մեր լեզվի պատմության շատ հարցեր է գիտական քննության նյութ դարձրել Գ. Սևակը: Նրան ավելի շատ հետաքրքրել են ժամանակակից հայերենի պատմության խնդիրները, նույնիսկ գրել է նրա համառոտ պատմությունը: Հին շրջանից Սևակը անդրադարձել է հայ բարբառների ծագման և հայ գրերի ստեղծման հարցերին:

«Հայ բարբառների ծագման հարցի շուրջը» ծավալուն հոդվածում¹⁰ Սևակը խիստ քննադատում ու մերժում է այն տեսությունը, ըստ որի հայերենի բոլոր բարբառները առաջացել են ո՛չ թե գրաբարից, ո՛չ թե գրաբարատիպ հին հայերենից, այլ պատմական Հայաստանում ա՛նդադրված այլևայլ ժողովուրդների կողմից հայոց լեզուն յուրացնելու պրոցեսում՝ հեռավոր նախապատմական շրջաններում: Նա պաշտպանում ու հիմնավորում է այն ճիշտ տեսակետը, որ «գրաբարը իր հնչյունական և քերականական համակարգով հանդիսանում է հայոց լեզվի ամենահնագույն և հնդեվրոպական հիմք-լեզվին ամենամոտ լիանգնած լեզվասիստեմ, որ մեր բոլոր բարբառների թե՛ հնչյունական, թե՛ ձևաբանական համակարգը գրաբարից է բխած, գրաբարի համակարգի ծնունդ է, նրա դարդացման, բաժանման, տրոհման արդյունք»:

Հայերեն գրերի ստեղծման ու Մեսրոպ Մաշտոցի մասին Սևակը գրել է մի քանի աշխատություն:

«Թե ի՛նչ է արել Մաշտոցը Սամոսատում» հոդվածում¹¹ քննության նյութ է դարձրել Մաշտոցի կենսագիր Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի մի փոքրիկ հատվածը, որի վերաբերյալ հայ և օտար շատ մասնագետներ արտահայտել են տարբեր, նույնիսկ հակասական կարծիքներ: «Այդ հատվածով է, որ պետք է պարզվի, թե Մեսրոպը եղեսիալում հայոց տառերը հորինելուց հետո ինչո՞ւ գնաց Սամոսատ, ի՛նչ արեց այնտեղ «հույն գրիչ» Հռոփանոսի օգնությամբ, և ի՛նչ էր Հռոփանոսի օգնությունը Մեսրոպին»: Բանասերներից ոմանք Հռոփանոսին վերագրում են տեխնիկական-գծագրական համեստ աշխատանք, ոմանք ամբողջովին նրան են վերագրում հայերենի տառերը ձևավորելու ստեղծելու աշխատանքը՝ Մաշտոցին թողնելով սոսկ հնչյունների գյուտը, ուրիշները գտնում են, որ Հռոփանոսը Մեսրոպի հորինած տառերի հիման վրա ղտնադան սառատեսակներ է պատրաստել:

Առանձնացնելով ու գնահատելով բանասերների ճիշտ մտքերը այդ հայտնի հատվածի վերաբերյալ, Սևակը հիմնավոր քննադատում է յուրաքանչյուրի սխալ ու անհամողիչ դրույթները և գիտականորեն հիմնավորում իր նոր ըմբռնումները: Հենվելով պատմական տվյալների վրա, հաշվի առնելով այն ժամանակվա դիտական ըմբռնումներն ու տառերի ուսմունքը և բացատրելով դպրոցյան գրիչ («գրիչ ոմն հելլենական դպրութեան»), յօրինեաց («ղամենայն ընտրութիւնս նշանագրացն... յօրինեաց») բառերի և երեք զույգ տերմինների («զնրբագոյնն և զլայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն») արտահայտած իմաստները, Սևակը եզրակացնում է. «Նա (Կորյունը—Ա. Գ.) գործին տեղյակ, ժամանակակից, թերևս նաև մասնակից անձնավորություն էր և քաջ գիտեր, թե ինչ է արվել Սամոսատում», «Մեսրոպը Սամոսատում Հռոփանոսի օգնությամբ գիտականորեն որոշել է, թե իր հորինած տառերից որոնք են համեմատաբար ավելի նուրբ (այժմյան տերմինով՝ խուլ), որոնք են ավելի թավ (այժմյան տերմինով՝ շնչեղ), որոնք են կարճ, որոնք՝ երկար, որոնք են կրկնակ կամ կրկնավոր (այժմյան տերմինով՝ բարդ), և որոնք առանձին (այժմյան տերմինով՝ պարզ): Սրանով մենք պարզեցինք նաև Հռոփանոսի ցույց տված օգնության բնույթը, որ ոչ այլ ինչ է եղել, քան քերականական-հնչյունաբանական կոնսոլտացիա, և ոչ թե տառերի գծագրություն, տառերի ձևակերպում և մանավանդ տառատեսակների հորինում»:

Իր մեկ ուրիշ հոդվածում, որ ունի «Մեսրոպյան գրերը, նրանց կառուց-

¹⁰ «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 224—245:

¹¹ «Աշխատություններ Երևանի պետական համալսարանի Ն. Մառի անվան կաթինետի»-1947, № 2, էջ 152—179:

վաճառքի սկզբունքները և աղբյուրները»¹² վերնագիրը, Սևակը գիտական բարեխիղճ վերլուծությունից հետո հաստատում է, որ Մեսրոպյան գրերի ակունքը գտնվում է ոչ թե մեղձավոր հունա-ասորա-պարսկական միջավայրում, այլ ժամանակով և տարածությամբ հեռավոր փյունիկ-սեմական՝ հարավ-արաբական-արամեական գրերի ոլորտում, ուր և եղել է նրանց իսկական բնօրրանը, և որ Մեսրոպյան գրերի հորինվածության գլխավոր սկզբունքը ոչ թե նույնականությունն է, այլ տարբերացումը և այլն:

Հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի համար հիրավի բախտորոշ նշանակություն ունեցող, դպրության, մշակույթի ու գիտության զարգացման գործում բացառիկ դեր խաղացած հայերեն տառերի հորինման, նրա արդյունք հանդիսացող մատենագրության սկզբնավորման, անմահ Մաշտոցի կյանքի ու մեծ ծառայության ընդարձակ և ուշագրավ պատմությունը Սևակը ներկայացրել է իր «Մեսրոպ Մաշտոց. Հայկական գրերի ու մատենագրության սկզբնավորումը» (1962 թ.) մենագրության մեջ, որը հրատարակվել է նաև ռուսերեն լեզվով: Աշխատությունը, որ յուրատեսակ ամփոփումն է հեղինակի այս շարքի գրեթե բոլոր ուսումնասիրությունների, բերում է գիտական հետաքրքիր նորություններ:

Գ. Սևակը ավելի շատ զբաղվել է ժամանակակից հայերենի պատմության հարցերով: «Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն» և շատ ուրիշ աշխատությունների մեջ արդի գրական լեզվի պատմության հարցերը քննել է այդ լեզուն կողմ ժողովրդի պատմության հետ սերտորեն կապված, լեզվական փաստական հարուստ նյութի ուսումնասիրության հիման վրա, պարզել ու հիմնավորել է շատ հարցեր, ճշտել է ոչ քիչ ըմբռնումներ ու պատկերացումներ, լուսաբանել հայ դասականների լեզվաշինարարական գործունեությունը և այլն:

«Արևելահայ դրական լեզվի պատմության պերիոդիզացիան» հոդվածում¹³ բարձր գնահատելով պատմական դիսցիպլինի շրջանաբաժանման դերն ու նշանակությունը, նա արևելահայ գրական լեզվի պատմությունը բաժանում է չորս շրջանի՝ կազմավորման կամ վաղ աշխարհաբարի (XVII—XVIII դդ.), ձևավորման կամ լուսավորական (XIX դարի սկզբից մինչև 70-ական թթ.), ժողովրդականացման կամ դասական աշխարհաբարի (70-ական թթ. մինչև 1920 թ.), սովետական կամ համազգային լեզվի (1920 թ. ի վեր):

Հայ նոր գրական լեզվի պատմությանը նվիրված Սևակի աշխատությունները, ամբողջությամբ վերցրած, գիտական կարևոր արժեք ունեն և այսօր էլ չեն կորցրել իրենց նշանակալից հետաքրքրությունը:

Գ. Սևակը գործուն մասնակցություն է ունեցել ժամանակակից հայերենի լեզվաշինարարությանը, նրա նորմավորմանն ու տերմինաշինությանը: Գիտապաշտոնական օրգանում (ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտե), գիտաբաժիններում (ՀՍՍՀ ԳԱ նախագահության կից տերմինաբանական խորհուրդ, ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տերմինաբանության ու խոսքի մշակույթի բաժին) և լեզվագործածության կարևոր ու ամենամասսայական բնագավառներում ծավալելով արդյունավետ աշխատանք, նա մեծապես նպաստել է ժամանակակից հայերենի զարգացմանն ու նորմավորմանը, լեզվաշինարարությանն ու տերմինաբանական աշխատանքների կանոնավորմանն ու խոսքի մշակույթի բարելավմանը: Սևակը Տերմինաբանական կոմիտեի ամենաեռանդուն անդամներից էր՝ սկսած նրա ստեղծման առաջին օրից (1930-ական թթ.): Նա նաև նրա առաջին գիտնական քարտուղարն էր: Նա է կազմել «Գիտական և գիտատեխնիկական տերմինների մշակման սկզբունքները և նորմաները հայերենում» և «Հայոց լեզվի նորմա-

¹² Մեսրոպ Մաշտոց, հոդվածների ժողովածու (Երևանի պետ. համալսարանի հրատ.), Երևան, 1963, էջ 163—208:

¹³ ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1947, № 3, էջ 35—46:

վորման սկզբունքները», որոնք հաստատվել են Տերմինաբանական կոմիտեի կողմից՝ համապատասխանաբար 1939 և 1955 թթ.: Տարբեր ժամանակներում նա ներկայացրել է ուղղագրության, կետադրության, տառադարձության ու բառափոխառության վերաբերյալ մի շարք նախագծեր, որոնք հաստատվել են ՌԲԿ-ի Տերմինաբանական կոմիտեի որոշումներով:

Գեղարվեստական գրականության ասպարեզում Գ. Սևակի գործունեությունը ընթացել է հիմնականում երկու ուղղությամբ՝ կատարել է թարգմանություններ և ուսումնասիրել է գեղարվեստական երկերի լեզուն ու ոճը:

Թարգմանություններից կարելի է հիշել, օրինակ, Մ. Դանիլևսկու «Արյունոտ կիրակին» պիեսը, Մ. Լեոնովի «Առաքատ», «Պաղեստինի ոստ» բանաստեղծությունները, Ա. Պուշկինի «Եվգենի Օնեգինը» (1949 թ.), որ առաջին թարգմանությունն է հայ իրականության մեջ և այլն:

Գ. Սևակը գեղարվեստական երկերի լեզվի ու ոճի առաջին և հմուտ ուսումնասիրողներից է, հայ գողոնների լեզվական արվեստի հետազոտության նախանձախնդիր լեզվագետը:

«Ժամանակակից հայերենի համառոտ պատմության» մեջ «Հովհաննես Թումանյանի լեզուն և ժողովրդայնության հարցը լեզվի մեջ» վերնագիրը կրող հատվածում նա սխալ է համարում, երբ «գրողների, ընթերցողների ու քննադատների մեծ մասը Թումանյանի լեզվի ժողովրդայնությունը հակամետ և բացատրելու էս ու էն-ով և բարբառային բառերով»: Նրա լեզվին ժողովրդականություն տվողը ոչ թե բառերն են, այլ «հարազատ, ժողովրդային լեզվամատոցությունը, պարզ, ոչ շինծու լեզուն, որ տրվում է հարազատ ժողովրդի կենդանի խոսքի ուղղորդի դիտումով և հմուտ օգտագործմամբ»:

Զբաղվելով Թումանյանի լեզվի էվոլյուցիայի հարցով և քննելով Թումանյանի կամ Թումանյանական լեզվի հատկանիշները, նա այն ճիշտ միտքն է հայտնում, որ մեծ բանաստեղծի լեզուն «ձեռք է բերվել տասնյակ տարիների համառ ստեղծագործական աշխատանքի հետևանքով»: Թումանյանի լեզուն անցել է երեք փուլ, և միայն երրորդ փուլն է (սկսվել է 1900-ական թթ. սկզբներից), որ բնորոշ է Թումանյանի լեզվին, երբ նրա լեզուն պարզ է ու կենդանի, հուշական ու արտահայտիչ, հարուստ ու գոհարակերտ:

Գեղարվեստական երկի լեզվաոճական արվեստի բավականաչափ հաջող ուսումնասիրության օրինակ է Գ. Սևակի՝ «Ն. Զառյանի «Արա Գեղեցիկ» ողբերգությունը»¹⁴ բանասիրական էսյուդը, ինչպես անվանել է ինքը: Շատ կողմերով հետաքրքիր այս աշխատության մեջ խոր ու հիմնավոր ուսումնասիրել է այդ ողբերգության լեզուն ու ոճը, բացահայտել հոգեբանության, դրոմիայի ու կերպարի կերտման լեզվաոճական հնարանները, նշել լեզվական սխալներն ու սայթաքումները: Սևակը «Արա Գեղեցիկի» լեզվաոճական արվեստը համարում է գեղարվեստական խոսքի նվաճում:

Սևակը քննել ու բարձր է գնահատել Ստ. Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպի, Վ. Խեչումյանի «Զվարթնոց» ժողովածուի նովելների, Սարմենի, Գ. Սարյանի, Ս. Տառնցու, Հ. Շիրազի լավագույն բալլադների, պոեմների ու բանաստեղծությունների լեզուն ու ոճը, նրանց լեզվական արվեստը:

Գ. Սևակը սովետահայ դպրոցի երախտավորներից է. միայն նրա կազմած «Հայոց լեզվի շարահյուսություն» դասագիրքը բավական է, որ նա արժանի կերպով համարվի հայ դպրոցի վաստակաշատ մանկավարժ: Հայ դպրոցի պատմության մեջ ոչ մի դասագիրք այնքան երկար կյանք չի ունեցել, որքան Սևակի այս աշխատությունը: Առաջին անգամ այս դասագիրքը հրատարակվել է 1936 թ. և այդ ժամանակից մինչև այսօր մնում է գործածության մեջ և, որ շատ կարևոր է, գրեթե անփոփոխ:

Երկար տարիներ դասախոսելով հանրապետության տարբեր բուհերի մասնագիտական ֆակուլտետներում և դառնալով բազմաթիվ ասպիրանտների դեկավար, նա աճեցրել է ուսուցչական մեծաթիվ կադրեր, մի քանի տասնյակ

¹⁴ Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ. հ. 42, 1954, էջ 3—40:

գիտնականներ, կյանքի տարբեր բնագավառների համար պատրաստել որակ-
յալ շատ աշխատողներ:

Գ. Սևակը մեծ դործ է կատարել հայ-վրացական բանասիրական կապերի
ուսումնասիրության ասպարեզում: Նա երկար տարիներ ղեկավարել է Երե-
վանի պետական համալսարանի Շ. Ռուսթավելու անվան հայ-վրացական բա-
նասիրության կաբինետը և զբաղվել վրաց բանասիրության առանձին հար-
ցերի ուսումնասիրությամբ:

Ավելորդ չէ նկատել, որ Սևակը երկար տարիներ զբաղվել է էսպերանտո-
լով: Նա ավելի քան 40 տարի զբաղվել է նրա տարածման գործով, կատարել
թարգմանություններ հայ դասականներից (Հ. Թումանյան, Ա. Իսահակյան,
Ալ. Շիրվանզադե և ուրիշներ), կազմել հատուկ ձեռնարկ¹⁵ և այլն:

Ամփոփենք. պրոֆ. Գրիգորյան Սևակը հայ ասպար լեզվաբաններից էր, ժա-
մանակակից հայերենի խոշոր մասնագետներից մեկը, հանրապետության
դպրոցների ու բուհերի վաստակաշատ ուսուցիչը, գրականության գործի և
րախտավերը:

ГУРГЕН СЕВАК

(К 80-летию со дня рождения)

А. В. ГРИГОРЯН

Резюме

Гурген Севак (1904—1981)—известный советский армянский лингвист, заслужи-
енный деятель в области науки и образования в нашей республике, опытейший препода-
ватель школы и вуза—за свою более чем полувековую научно-творческую жизнь опу-
бликовал множество ценных научных трудов, являющихся важным вкладом в армени-
стику.

Его труды «Учение о частях речи», «К вопросу о происхождении армянских диа-
лектов», «Месроп Маштоц», «Краткая история современного армянского языка», «Со-
ветский период развития армянского языка» и др. являются ценными научными иссле-
дованиями и содержат новое слово в истории армянского языкознания.

Г. Севак имеет большие заслуги в деле создания стабильных учебников для шко-
лы и вуза. Его учебник «Синтаксис армянского языка» около полувека использо-
вался в средней школе, а его труды «Теория современного армянского языка» и «Курс со-
временного армянского языка» имеют важное значение как научная грамматика совре-
менного армянского языка.

¹⁵ Ձեռնարկ էսպերանտո միջազգային լեզվի. կազմեց Գ. Սևակ. Երևան, 1930: